

ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱՄԻԱՑՆԵԼՈՒ Ի ՆՊԱՍՏ ՑՈՅՑԵՐ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Ա.-ի կողմէ արձակուած մէկ կոչին ընդառաջելով, Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեան խորհրդակցելով հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ, ծրագրուեցաւ կազմակերպել խաղաղ ցոյցեր: Որոշուեցաւ նաեւ հեռագիրներ եւ յուշագրեր յղել առ որանկէ:



Արեւմտեան Ամերիկայի Ա.Գ. Հնչակեան կուսակցութեան Հայ Դատի Մարմինը իր հերթին, Փետրուարի 28-ի համար խաղաղ ցոյց մը կազմակերպելու կոչ հրապարակեց: «Կիլիկեան թեմի» Առաջնորդարանը եւս մասնակից եղաւ ցոյցերու կազմակերպման:

Արդարեւ, Կիրակի, 28 Փետրուար 1988-ի կէսօրուան ժամը 1-ին, հազարաւոր հայեր պաստառներով եւ համախումբ ուղղուեցան դէպի Լոս Անճելըս Սիթի Գոլէժի դաշտը: Ցոյցի առաջին շարքին կը տեսնուէին՝ Շահէ Արք. Աճէմեան, որ հիւրաբար կը գտնուէր Լոս Անճելըս, Տաթեւ Արք. Սարգիսեան եւ այլ պատասխանատու դէմքեր: Վաչէ Արք. Յովսէփեան նոյն օրերուն էջմիածին մեկնած ըլլալով, չկրցաւ մասնակցիլ ցոյցին:

Համախմբուած հայութեան առջեւ ելոյթներ ունեցան ուսանողական եւ աշակերտական խմբաւորումներու ներկայացուցիչներ: Արտասանեց՝ ծանօթ ասմունքող խաչիկ Արարատեան:

Ելոյթ ունեցաւ նաեւ Արշակ քահանայ խաչատուրեան. ան իր խօսքին մէջ շեշտեց, թէ հայութիւնը մէկ եւ անբաժանելի է եւ վճռական պահուն կրնայ միանալ եւ բռունցք դառնալ:

Յայտագրի վերջաւորութեան խօսք առաւ Տաթեւ Արք. Սարգիսեան. ան յայտնեց թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ը, լսելով Ղարաբաղի եւ Հայաստանի մէջ տեղի ունեցող ցոյցերու եւ դէպքերու մասին, հեռագրած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինին եւ իր հօտին անունով զօրավիգ դարձած է անձնապէ՛ս վեհափառին ու անոր դիրքորոշումին, ինչպէս նաեւ հայրենիքի ժողովուրդին, Ղարաբաղի հայութեան:

Տաթեւ Սրբազան եզրափակելով իր խօսքը ըսաւ թէ ինք այցելած է Վաչէ Արք. Յովսէփեանին, անոր էջմիածին մեկնելէն առաջ: Հանդիպման ժամանակ Վաչէ Սրբազան յայտնելով իր մեկնումի մասին, կ'ընդգծէ, թէ. - «ես կը մեկնիմ, սակայն սիրտս ու հոգիս ձեզի հետ միասին պիտի քալէ: Երբ վերադառնամ Ա. էջմիածինէն, կը կազմակերպենք նոր եւ աւելի մեծ ցոյց մը»:

